ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Բագրատ Լեռնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Պետության ազգային անվտանգության համակարգում անվտանգային բազմաթիվ խնդիրների շարքում այսօր հրամայական է դարձել նաև կենսաանվտանգության ապահովման հարցը: Հայտնի է, որ կենսաանվտանգությունը վտանգավոր միկրոօրգանիզմներից, տոքսիններից և ժամանակակից կենսատեխնոլոգիաների բացասական հետևանքներից պաշտպանվածության վիճակն է: Այն ներառում է մի քանի հիմնական ուղղություններ (այդ թվում՝ առողջապահական, գյուղատնտեսական, էկոլոգիական), որոնք պաշտպանություն են ապահովում տարբեր մակարդակներում: Ամենավերին՝ ռազմավարական մակարդակում, կենսաանվտանգությունը պետության կողմից կենսաբանական ռիսկերի գնահատումն է, նվազեցումը կամ չեզոքացումը, կենսաահաբեկչության սպառնալիքներից պաշտպանության իրականացումը և այլն: Կենսաանվտանգությունը պահանջում է ուսումնասիրման համակարգային մոտեցումուսումնասիրման բոլոր մակարդակներում և առումներում:

Երբեմն կենսաանվտանգությունը սխալմամբ նույնականացվում է էկոլոգիական անվտանգության ավելի նեղ բաղադրիչներից մեկի՝ կենսաբանական անվտանգության հետ: Էկոլոգիական անվտանգությունը լայն հասկացություն է, որը վերաբերում է շրջակա միջավայրի, էկոհամակարգերի, բնական ռեսուրսների և մարդու կենսագործունեության համար անվտանգ պայմանների պահպանմանը: Կենսաբանական անվտանգությունը կենտրոնանում է կենսաբանական գործոններից բխող ռիսկերի ու սպառնալիքների կանխարգելման վրա: Այսինքն, դասական աստիճանակարգությամբ՝ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. Ազգային անվտանգություն → Շրջակա միջավայրի (կամ՝ էկոլոգիական) անվտանգություն → Կենսաբանական անվտանգություն → Կենսաանվտանգություն: Պետք է նկատի առնել, որ արդեն իսկ որոշ նոր մոտեցումներում կենսաանվտանգությունը դիտարկվում է որպես ինքնուրույն տիրույթ (ինչպես, օրինակ, կիբեռանվտանգությունը՝ տեղեկատվական անվտանգությունից անջատ), որը թեպետ հատվում է էկոլոգիական, կենսաբանական անվտանգությունների հետ, սակայն առանձին և կարևոր ուղղություն է, քանի որ ուղղակիորեն առնչվում է մարդու և կենդանի օրգանիզմների կյանքի անվտանգության ու կյանքի իրավունքի, պետության հիմնական ռեսուրսի՝ բնակչության կենսունակության և գենոֆոնդի պահպանման հետ: Հետևաբար, հարկ է այն դիտարկել որպես ազգային անվտանգության առանձին ասպեկտ կամ բաղադրիչ:

Ավելին, կենսատեխնոլոգիական արդի տարաբնույթ վտանգներից և սպառնալիքներից պաշտպանվածության վիճակի ապահովումն այսօր պետության արդյունավետ գործունեության ռազմավարական գնահատման և պետության դիմակայունության մակարդակի ցուցիչ է, որը դիտարկվում և գնահատվում է ոչ միայն ոլորտային

անվտանգությունների ապահովման, այլև, ընդհանուր առմամբ, պաշտպանությանը պետության պատրաստության համալիր գործընթացի առումով, որովհետև կենսաանվտանգության սպառնալիքները կարող են զգալիորեն ազդել պետության ազգային անվտանգության վրա:

Ժամանակակից հիբրիդային պատերազմավարման եղանակների մեջ, ավանդական սպառնալիքներից զատ, հավանական հակառակորդի բնակչության, տնտեսության, բնահամակարգերի վրա կենսաբանական և այլ տիպի ազդեցությունը ևս դարձել է սպառնալից գործոն և միջազգային հարաբերություններում ընդդիմապայքարի ուրույն տիրույթ: Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «կենսաբանական ահաբեկչությունը» (կենսաահաբեկչությունը) և «կենսաբանական պատերազմը» այլևս իրողություններ են: Պայքարի այսպիսի «մարտադաշտերում» կենսաբանական զենքի օգտագործման էկոլոգիական հետևանքները բերում են կենդանի օրգանիզմների վրա բիոցիդային ազդեցության, այսինքն՝ կենդանության ոչնչացմանը, կյանքի դադարեցմանը: Այդպիսով, քիմիական և կենսաբանական զենքերի արտադրության, կիրառության և զարգացման հնարավորությունները (այդ թվում՝ վիրուսների, համավարակների միտումնավոր ստեղծման ու տարածման իմաստով) նոր մարտահրավերներ են առաջ քաշում, ինչն էլ, իր հերթին, ավելի է մեծացնում և ընդգծում կենսաանվտանգության ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրա արդիականությունը, քանի որ կայուն զարգացման վրա ազդող արդի մարտահրավերներից մեկը ներկայումս հենց կենսաանվտանգայինն է:

Այս ամենը ընդգծում են ատենախոսության թեմայի արդիականությունը: Ավելին, աշխատանքն արդիական է հատկապես Հայաստանի Հանրապետության կենսաանվտանգային շահերի ապահովման տեսանկյունից: Օրինակ, կենսաբանական լաբորատորիաների գործունեության առումով ՀՀ-ն որոշակիորեն խոցելի վիճակում հայտնվեց դեռ 2020 թ.-ից, երբ լայն տարածում գտան Հայաստանում, մասնավորապես՝ Երևանում, Գյումրիում, Իջևանում, Մարտունիում, Կապանում և Վանաձորում բացված ամերիկյան կենսաբանական մոտ 10 լաբորատորիաների գործունեության նպատակների շուրջ մտավախությունները, որոնք հիմնականում հնչում էին ռուսական և չինական պաշտոնական շրջանակներից: Թե՛ Ուկրաինայում, թե՛ Հայաստանում և թե՛ հետխորհրդային այլ երկրներում այսօրինակ լաբորատորիաների առկայությունը մշտապես անհանգստացրել է պաշտոնական Մոսկվային, իսկ «COVID-19» համավարակի բռնկման ֆոնին և ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների դինամիկային զուգընթաց՝ Մոսկվայի կոշտ քննադատություններին միացավ նաև պաշտոնական Պեկինը: Հատուկ ընդգծվում էր, որ այդ լաբորատորիաներում հնարավոր է աշխատանքներ են տարվում վտանգավոր հիվանդությունների և տարբեր ախտածինների, այդ թվում՝ ռազմական նպատակներով ստեղծելու և փոփոխելու ուղղությամբ: ՀՀ-ն արձագանքել է այս խնդրին: Հարկ է նշել սակայն, որ Հայաստանում գործող և օտարերկրյա ներդրումներով սնվող որոշ հետազոտական կենսալաբորատորիաների վերահսկողության մակարդակը դեռևս մնում է ոչ բարձր մակարդակի, և այսօրինակ մեղադրանքները կարող են կրկնվել՝ դարձյալ վերածվելով ՀՀ-ի համար անվտանգային թիրախային խնդիրների:

Այս իմաստով, հիրավի արդիական են դարձել օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը և ոլորտային նպատակային քաղաքականության մշակումն ու

իրականացումը, ինչն իր ատենախոսության մեջ հանգամանորեն վերլուծել և եզրակացություններում կարևորել է նաև ատենախոսը:

Այսպիսով, վերոշարադրյալից բխում է, որ ատենախոսության թեմայի արդիականությունն անհերքելի է մի շարք առումներով: Կենսաանվտանգության բազմաթիվ խնդիրներ ունեն նաև օրակարգային նշանակություն ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից, ինչից ելնելով էլ՝ ՀՀ կենսաանվտանգության ապահովման ոլորտի ամբողջական կայացումն ու զարգացումն ունեն հրատապ նշանակություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել և համակողմանիորեն վերլուծել ՀՀ-ում կենսաանվտանգության համակարգի կայացման նախադրյալները և գիտագործնական առումով հիմնավորել ոլորտում կառավարման կենտրոնացված մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Առաջադրված նպատակին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է մի շարք խնդիրներ, որոնք ամբողջացնում են նպատակին հասնելու հետազոտական ջանքերը, մասնավորապես՝ փորձելով ներկայացնել վերլուծել և նորովի իմաստավորել կենսաանվտանգության հասկացության բովանդակությունը, ընդգրկման շրջանակներն ու պատմական էվոլյուցիան, կենսաբանական սպառնալիքների քաղաքական առանձնահատկություններն ու սոցիալ-տնտեսական հետևանքները ժամանակակից աշխարհում, կենսաէթիկական հիմնահարցերը՝ որպես կենսաանվտանգության համակարգի անքակտելի մաս ու կենսաբանական սպառնալիքների հնարավոր աղբյուր, Հայաստանի Հանրապետության կենսաանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող իրավաքաղաքական միջավայրը, մարտահրավերներն ու հրամայականները:

Այս և այլ խնդիրների առաջադրումը հեղինակին օգնել է համապարփակ ձևով մոտենալու գլխավոր նպատակի իրականացմանը, և աշխատության բովանդակությունը ցույց է տալիս, որ դա նրան հաջողվել է: Հատկանշական է, որ հեղինակը փորձել է ոչ միայն գնահատել և իմաստավորել առկա խնդիրները, այլև արված եզրակացությունների վրա տալ ոլորտը լավարկող առաջարկություններ, որոնք կարող են օգտավետ լինել ոլորտը կարգավորող համապատասխան մարմինների համար:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ, միջազգային փորձի վերլուծության արդյունքում, հիմնավորվել է, որ կենսաանվտանգության ոլորտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է անցում կատարել կառավարման կենտրոնացված համակարգի պարադիգմին, որտեղ կենսաանվտանգությունը դիտարկվում է որպես ինքնուրույն և ռազմավարական ուղղություն: Այս համատեքստում, հեղինակը հատկապես ընդգծել է էկոլոգիական անվտանգության համակարգից կենսաանվտանգության տարանջատման խնդիրը, ինչպես նաև դրա՝ որպես պետության ազգային անվտանգության ինքնուրույն և ռազմավարական ուղղության կայացման անհրաժեշտությունը: Հեղինակը դրա ինքնուրույն կայացումն ու զարգացումը դիտարկում է որպես հրամայական՝ արդի սպառնալիքների համատեքստում:

Ատենախոսության մեջ իրականացվել է կենսաանվտանգության ապահովման հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրություն՝ քաղաքագիտության և ազգային անվտանգության տեսության հարացույցի շրջանակներում՝ նպաստելով թեմայի վերաբերյալ գիտականորեն նոր և խորքային հայացքի ձևավորմանը:

Հատկանշական է, որ ատենախոսության մեջ համակողմանիորեն քննության է առնվել քաղաքական ինստիտուտների դերն ու դրանց կայունության նշանակությունը կենսաբանական սպառնալիքների կանխարգելման գործընթացում: Ապացուցվել է, որ քաղաքական ինստիտուտների շարունակական բարեփոխումն ու արդիականացումը հանդիսանում են պետության դիմակայունության բարձրացման և ապագա կենսաբանական սպառնալիքներին ու համավարակներին արդյունավետորեն հակազդելու առանցքային նախապայման:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը: Ատենախոսությունն աչքի է ընկնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակությամբ: Աշխատանքում ստացված արդյունքների ճշտությունը և հիմնավորումը պայմանավորված է հեղինակի առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված մեթոդներով:

Տեսական առումով՝ բացահայտվում և կարևորվում են կենսաանվտանգության ապահովման բազմաթիվ շերտեր, հատկապես՝ կենսաանվտանգության ոլորտի կառավարման, կենսաբանական սպառնալիքներից պաշտպանվածության, ոլորտի իրավակարգավորումների առումներով:

Գործնական տեսանկյունից՝ ատենախոսությունը կարող է զգալի օգտակարություն ունենալ ՀՀ պետական կառավարման քաղաքականության մշակման և գործադրման դերակատարների համար: Ատենախոսության շրջանակում կատարված վերլուծություններն ու եզրահանգումները և, հատկապես, առաջարկությունները կարող են օգտակար լինել ՀՀ կենսաանվտանգության ապահովման գործընթացում ներգրավված կառույցների համար: Բացի այդ, գտնում ենք, որ ատենախոսությունը կարող է նոր հետազոտությունների խթան հանդիսանալ ոլորտով հետաքրքրված և զբաղվող շրջանակների համար:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 169 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, առաջադրվում են օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքն ու գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև մատնանշվում են վերջինիս փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկությունները:

Առաջին գլուխը նվիրված է հետազոտության տեսական հիմնավորմանը, որի նպատակն է ստեղծել ամուր հայեցակարգային հենք «կենսաանվտանգություն» եզրույթի բովանդակային ընկալումն ու ընդգրկման շրջանակները վերլուծելու, ինչպես նաև պետության ազգային անվտանգության համակարգում դրա տեղն ու դերը նախանշելու համար:

Երկրորդ գլխում ներկայացված են կենսաանվտանգության ապահովման պրակտիկաներ՝ տնտեսապես զարգացած երկրների փորձառության ուսումնասիրությամբ՝ ընդգծելով կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետությունը տարբեր երկրների համապատկերում:

Երրորդ գլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում կենսաանվտանգության ապահովման գործընթացի ներկա վիճակի, ինչպես նաև ոլորտում պետական-քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական մոտեցումների ու չափանիշների ուսումնասիրությանը:

Եզրակացությունում և առաջարկություններում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումները և դրանցի բխող առաջարկությունները:

Բագրատ Լեռնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության «Կենսանվտանգության տեսական և գործնական հիմքերը» վերնագրով առաջին գլխի ««Կենսանվտանգություն» հասկացության սահմանումը, ընդգրկման շրջանակները և բովանդակային փոխակերպումները» վերտառությամբ առաջին ենթագլխում հեղինակը նշում է, որ հայերենում և ռուսերենում հաճախ օգտագործվում է մեկ բառ՝ «կենսանվտանգություն», իսկ անգլալեզու գիտական գրականության մեջ գործում է տարանջատում երեք հիմնական տերմինների միջև՝ «Biosafety» (կենսանվտանգություն), «Biosecurity» (կենսապահովություն) և «Biodefense» (կենսապաշտպանություն):

«Կենսաանվտանգություն» տերմինը ոչ միանշանակ կերպով է թարգմանվում միայն «Biosafety»: Մասնագիտական գրականության մեջ այն թարգմանվում է նաև «Biosecurity», ինչը նույնականացվում է կենսաբանական անվտանգության հետ և առաջացնում շփոթ: Հետևաբար թարգմանական տարանջատումը պետք է տրվի՝ ելնելով նրանից, թե խոսքը գնում է մարդուն և շրջակա միջավայրին լաբորատոր պայմաններում ստեղծված կենսատարրերից, վիրուսներից, պաթոգենների պատահական ազդեցությունից կամ արտանետումից պաշտպանության՞ն, թե՞ կենսաբանական արտաքին սպառնալիքներից պաշտպանվածության մասին: Այս իմաստով, կարծում ենք, որ ենթագլխի այդ հատվածում թարգմանական ճշգրտումների նպատակով տեղին կլիներ հեղինակի կողմից նշված էջում տրվեին լեզվական և իմաստնային նրբություններ պարունակող այս կարևոր պարզաբանումները, ինչը չէր հանգեցնի հասկացութային որոշակի շփոթի և թյուրընկալման: Ավելին, սա լրացուցիչ և հստակեցնող ճշգրտում կլիներ հեղինակի կողմից, ինչը կարող էր թեկուզ որպես բացատրություն աստղանիշով տրվել էջի ներքևում:

2. Ատենախոսության մեջ կիրառվում է «կենսանվանգություն» եզրույթը, մինչդեռ հայերենի լեզվի կանոնների համաձայն ճիշտ է օգտագործել «կենսաանվտանգություն». «ա» հոդակապի առկայությունը պարտադիր է: Հայերենում երկրորդ արմատը եթե ձայնավոր է, ապա «ա» հոդակապը սղվում է, սակայն, «կենսաանվտանգությունը» բառային նորակազմություն է, ի սկզբանե ձևավորվել է «ա» հոդակապով: Ավելին, հայերենում «կենսա» արմատի «ա» հոդակապը նշվում է ինչպես «կենսաանվտանգություն», այնպես էլ, օրինակ, «կենսաապահովում», «կենսաբազմազանություն», «կենսապաշտպանություն», «կենսաքիմիական», «կենսատեխնոլոգիական» և այլ տերմիններում: Որպես ասվածի հիմնավորում և ակադեմիական հիմք՝ նշենք ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած արդի հայերեն բառերի բառարանը (տես՝ Ա. Ս. Գալստյան, Նոր բառեր, Պրակ Ա, «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ», Երևան, 2015, էջ 91: Բառարանի էլեկտրոնային հղումը՝ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=121&query=%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1&l=hy_LB), որում նշված է **«կենսաանվտանգություն»**:

Սա խիստ կարևոր է ոչ այնքան լեզվական, որքան հենց բովանդակային և իմաստանային առումներով, որովհետև կանխում է «կյանք» և «կենսա (բիո)» երկու բառարմատների միջև իմաստնային շփոթը, այն է՝ «կենսա» (կյանքի իմաստով, այսինքն՝ «կենսաանվտանգություն»՝ կյանքի անվտանգություն) և «կենսա» (կենսաբանական իմաստով, այսինքն՝ ազգային անվտանգության բաղադրիչ հանդիսացող «կենսաբանական անվտանգություն»՝ որպես «կենսաբանական» բառի «կենսա» (բիո) արմատ):

Ինքը հեղինակը, երբ թվարկում է «կենսաանվտանգություն» տերմինի անգլալեզու գիտական գրականության մեջ իր թարգմանությամբ նշված երեք հիմնական տարրերը, «կենսապաշտպանություն» տերմինը գործածելիս ակամայից նշել է ճիշտ կերպով՝ «ա» հոդակապով (էջ 16), կամ երբ նշվում է «կենսաէթիկա» հասկացությունը, որին նվիրված է ատենախոսության մի ամբողջ ենթագլուխ (էջ 55), հեղինակը դարձյալ ինքնաբերաբար նշում է «ա» հոդակապով, այսինքն՝ «կենսաէթիկա», ոչ թե՝ «կենսէթիկա»: Նույն տրամաբանությամբ հարկ է ատենախոսության մեջ ուղղել «կենսահաբեկչություն» տերմինը (էջ 17), որը հայերենում գրվում է «կենսաահաբեկչություն»:

Հետևաբար հակված ենք կարծելու, որ «կենսաանվտանգություն» տերմինի պարագայում տեղի է ունեցել ուղղագրական վրիպակ: Հուսով ենք, որ ատենախոսությունը որպես մենագրություն հրատարակման դեպքում «կենսաանվտանգություն» տերմինը ճիշտ կկիրառվի:

3. Ատենախոսության՝ «ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման իրավաքաղաքական նախադրյալները և զարգացման հեռանկարները» վերնագրով երրորդ գլխի «Կենսանվտանգության ապահովման գործընթացի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով առաջին ենթագլխում, անդրադառնալով ոլորտի իրավակարգավորումներին, ատենախոսը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունը 2004 թվականին պաշտոնապես միացել է 2000 թվականի հունվարի 29-ին Մոնրեալում ստորագրված «Կենսաբանական բազմազանության վերաբերյալ» կոնվենցիայի «Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենյան արձանագրությանը: Հարկ է նշել, որ «Կենսաբանական բազմազանության վերաբերյալ» կոնվենցիային միացել է աշխարհի 145 երկիր, իսկ դրա Կարթագենյան արձանագրությունն ունի ոլորտային կարևոր կարգավորիչ նշանակություն: Ելնելով դրանից՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն միացել է արձանագրությանը, այլև 2004 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ Կառավարության N 1219-Ն որոշմամբ «Կենսաբանական բազմազանության վերաբերյալ» կոնվենցիայի «Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենյան արձանագրության 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային իրավասու մարմին և ազգային համակարգող կենտրոն ճանաչել է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարությանը՝ այդպիսով նաև ինստիտուցիոնալ հենք ստեղծելով այս բնագավառում հետագա գործունեության համար: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե այս հանգամանքը պատշաճ կերպով արտացոլվեր ատենախոսության մեջ, մինչդեռ Կոնվենցիային և Կարթագենյան արձանագրությանը ՀՀ-ի միանալու փաստի առնչությամբ ատենախոսության մեջ աղբյուր չկա նշված: Առկա է միայն Կարթագենյան արձանագրության պաշտոնական աղբյուրը՝ ատենախոսության գրականության ցանկում: Ատենախոսության մեջ բացակայում են նաև ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության մի

շարք որոշումներ, այդ թվում՝ 2015 թ. փետրվարի 12-ի ՀՀ Կառավարության N 108-Ն որոշումը «Լաբորատոր կենսաանվտանգության, կենսաապահովության, քիմիական և ճառագայթային անվտանգության համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջները հաստատելու մասին»:

Լիահույս ենք, որ ատենախոսի կողմից նշված խնդիրը լրացուցիչ պատշաճ ուսումնասիրման առարկա կդառնա իր հետագա հետազոտություններում:

4. Ատենախոսության գրականության ցանկի «Գիտական հոդվածներ և աշխատություններ» բաժնում մեծ մասամբ նշված են գիտական հոդվածներ: Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակն օգտվեր ոլորտին առնչվող մի շարք մենագրական ծավալուն այլ աշխատություններից ևս, ինչպիսիք են, օրինակ՝

1) L. Casey Chosewood, Deborah E. Wilson (eds.). *Biosafety in Microbiological and Biomedical Laboratories (BMBL).* CDC & NIH 5th ed., U.S. Department of Health and Human Services, Public Health Service, CDC, NIH Washington, D.C., USA 2009 LCCN 2009526433; HHS Publication No. (CDC) 21-1112, 415 p., ISBN 9780160850424

2) Diane O. Fleming, Debra L. Hunt (eds.). *Biological Safety: Principles and Practices.* 3th edition, ASM Press 2000, 784 p., ISBN 13: 9781555811808

3) Barker, K., Francis, R. A. (Eds.). *Routledge Handbook of Biosecurity and Invasive Species.* London: Routledge, 2021. 368 p., ISBN 978-0815354895

4) Ryan, J. R. *Biosecurity and Bioterrorism: Containing and Preventing Biological Threats.* 2nd ed. Amsterdam: Butterworth-Heinemann (Elsevier), 2016. 373 p., ISBN 978-0128020296

5) Croddy, E. *Chemical and Biological Warfare: An Annotated Bibliography.* Lanham, MD: Scarecrow Press, 1997. 472 p., ISBN 978-0810832718

6) Lijun Shang, Weiwen Zhang, Malcolm Dando. Essentials of Biological Security: A Global Perspective. 1st Edition. Wiley, 2024. 320 p., ISBN-13: 9781394189014

Հարկ ենք համարում նշել նաև, որ աշխատության մեջ ատենախոսի կողմից պաշտոնական ընդդիմախոսի հեղինակած «Էկոլոգիական անվտանգություն. ռազմավարական և քաղաքագիտական գնահատումներ» մենագրության (Ա. Շահվերդյան, Եր., 2024, 328 էջ, ISBN 978-9939-0-4824-6) ուսումնասիրումը և նշումը ևս օգտակար կլիներ, քանի որ այն, լինելով ոլորտին առնչվող հայրենական մասնագիտական գրականության մեջ առաջին այդպիսի հրատարակությունը, կարող էր ոչ միայն ընդհանուր գծերով, այլև կոնկրետ հատվածներով նպաստավոր լինել հեղինակի համար:

Հույս ունենք, որ ատենախոսի կողմից նշված մենագրությունները լրացուցիչ պատշաճ ուսումնասիրման առարկա կդառնան իր հետագա հետազոտություններում:

Հարկ է ընդգծել, որ նշված նկատառումներն ու առաջարկությունները ամենևին չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը: Հակառակը, դրանք միտված են լավարկելու, հարստացնելու և ընդլայնելու աշխատության հետագա հետազոտությունների ուղղվածությունը և բխում են ատենախոսության շահերից:

Հուսով ենք, նշված նկատառումները կդառնան հեղինակի կողմից բազմակողմանի ու շրջահայաց կերպով ուշադրության և ուսումնասիրության առարկա՝ իր հետագա գիտական գործունեության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բագրատ Լեոնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտակիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 7 գիտական հոդվածներում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ Բագրատ Լեոնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Հեղինակը արժանի է ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմական ռազմավարական
հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
Պատմության, քաղաքագիտության և միջազգային
հարաբերությունների ամբիոնի դասախոս,
բ.գ.թ., դոցենտ **Ա. Շահվերդյան**

Ա. Մ. Շահվերդյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի գիտական քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ **Մ. Սարգսյան**

«08», «06», 2026 թ.